

Ծերը իւր երկանտձև ափէն իմ չորցած ափիս մէջ սլարպելով մասն մի խարկած ցորենահատ, — Առ կեր, սասաց, տէր:

— Փորձեցի, յիսուի համիղ էր:

Ետէն տուաւ, աւելցնելով: — Ենորհա-կալ ենք, որ մեզի հետ կը ճաշես:

— Ենորհ ունիմ, ասացի:

— Ղիտենս, ասաց, ի՛նչպէս ծեր եմ ես:

— Սակայն քաջ կ'երկուսաս:

— Այո տէր, քաջ եմ. եղած եմ ՚ի Մոս-կուա, Խաղան, Իրբութսք, Քուգուր, ընդ համօրէն Սիբերիա:

— Ի՛նչպէս, ի՛նչ կերպով:

— Պարոն մի զիս հետը տարաւ. ես շատ տարիք ունիմ:

— Քանի տարեկան ես:

— Քառասուն. երբ փառքեիչ առաւ Երեան, այն ատեն ես երկու տասը տարեկան էի:

— Քա՛մն ուրեմն:

— Ոչ. տա՛նն ե երկու:

— Տասնուերկու:

— Այո, տասնուերկու:

— Չէ քառասուն ուրեմն, այլ վաթսու-նը անցուցած ես:

— Այո, անցուցած եմ. ես ծեր եմ:

Սիրով երկնցան դէպ ինձի և այլ կորա-ցեալ ափեր, մաքրուած ցորենահատե-րով: Չհրաժարեցայ, որպէս զի արեւելեան հիւրամեծարութեան նախատինք չբերեմ: սկսայ և ես ընդ ափ փշրել խարկած հաս-կերը՝ ճիշդ Առաքելոց նման. միտքս եկաւ Աւետարանի մէջ գրուածը, թէ ինչպէս անգամ մի Առաքեալք արտորայից մէջէն անցնելով, կը կորզէին հասկերը և ընդ ափ փշրելով կ'ուտէին, այս վայրենեաց նման: « Եւ եղև ՚ի շաքաթու յիսկորդում առա-ջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն, և աշակերտքն նորա կորզէին հասկ, փշրէին ընդ ափ և ուտէին... (Ղուկ. Զ. 1-5):

Այն այս վայրենիք ալ մեծ սոճի օր էր որ զայս կ'առնէին: Այլսկերպութեան տօ-նին, օգոստոս 6 ին, յորում՝ առաջին ան-գամ տեսայ զԱրարատ:

Աւերորդապաշտական երկիւղ մի սպըր-դեցաւ ՚ի հոգիս. ըստ աւանդութեան, ՚ի 6 օգոստոսի Քրիստոս ելաւ լեռը և այլակեր-պեցաւ. ի՛նչ կը սպասէ ինձ այդ լեռան վրայ, որուն կը մերձենամ:

Այս վայրկենէն սկսեալ Արարատ դուրս չեկաւ այն միմովայելուչ պատկերին շրթ-շանակէն՝ որ իմ առաջն տարածուած էր:

Կը շարունակուի:

ՎԱՍՆ ԼՈՒՍՆԻ ԵՒ ԱՍՏԵՂԱՅ

Ջւղոյն էաւ Արարին, զոր արար յառաջին աւ-տուրն, և արար աման օգեղէն արեգակնաւ. և յատակ լոյսն և զբերձութիւն էարկ յարեգակն, և զայլ ազօտն և զէիկազոյնն յամանն լուսնին, և զմիտառեալն՝ յատեղացն: Զի որպէս լու-սինն շիկազոյն և գէշ թուլացուցանէ և փափ-կացուցանէ, և ոսկուն առնէ զրոյսս և զտունկս: Ոմանք ասեն թէ լուսին զլոյսն յարեգակնէ առնու, այլք չհաւատան: Այլ որպէս յարար-չութեանն որիւք կազմեցաւ լուսնին ամանն և ար-կաւ ՚ի նմա լոյսն, նոյնպէս կայ և մնայ: Քանզի փորձովոց է լուսին իբրեւ զաման երկբերանի. յորժամ պակասիլ սկսանի՝ ընդ մի գունն ելանէ

և զթիկակմբն պատի, և գայ մինչև ամենևին պա-կասի և սպառի ՚ի ներքոյ դեհացն, և մինչ ՚ի վե-րին կողմն հասեալ լինի՝ մինչ ՚ի միւսս գունն ընդ որ ՚ի ներքս մտեալ գայ դարձեալ մեղմով և ընու-զփորաձէջ՝ ՚ի լրմանէն, և դարձեալ ելանէ ՚ի պակասեալն: Արեգակն զինչ սայլի ակն երթայ, զոր ասեն այլք իբրեւ զՐախազաց և իբրեւ զա-զօրիս. իսկ լուսին ՚ի թուիչ երթայ յառաջ սո-ղալով, և աստեղքն ոստոստեալ՝ արեգակն՝ յուսոյ ակն կամ մեծակն թարգմանի, և լուսնին՝ եթէ յոյս ունի:

ՈՍԿԵՓՈՐԻՉ